

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵՄԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիարիոյ համար Տարեկան 12 փր.
» » Վեցամսեայ 6 փր.
Արտասահմանի համար (երկու փոքր մեկ
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր.
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եռայն զրկեր հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ն.Ա. (Պուլկարիա)
Редакция на ВѢСТНИКЪ „Иравункъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„Ira vounk“
V A R N A (Bulgarie)

Rev. Père G. Kalémkarian M. chitarist ngasse
N° 4 Vienne

ՀԵՌԱՊԱՏԿԵՐԸ

(Շար. Ասիւ. քիւնե եւ վերջ)

Այսպէս մարդկութեան արդի կարգաւորութեան մէջ իրերու որքան տրամաբանական այնքան ալ անխուսափելի բերմամբ քաղաքակիրթ ազգերու շահամոլութեան ոգին հետզհետէ կ'աճի կը զարգանայ ի միաս գեղեցիկ գաղափարներու, ազնիւ զգացումներու, որոնք այս ընթացքով 20 տարուան մէջ անվրէպ մէկ կողմ պիտի նետուին իբր անպէտ եւ վնասակար բաներ:

Եւ ո՞վ կրնայ ըսել թէ մարդիկ կամաց կամաց վարժուելով այս նոր ուղղութեան, եւ խորհելու շարք սովորական եղող կերպերու տեսակէտով կատարեալ յեղաշրջութեան մը ենթարկուելով, վերջապէս օր մը չի պիտի հասնին այն կէտին ուր պարզապէս առաքինութիւն եւ առաւելութիւն մը նկատուի ինչ որ այսօր տակաւին բարոյապէս տգեղ եւ դատապարտելի կը տեսնենք: Մէկ խօսքով, ո՞վ կրնայ երաշխաւորել թէ շահամոլութիւն բացատրութիւնը իր արդի նշանակութիւնը փոխելով, օր մը չի պիտի տայ ընտիր բարեմանութեան մը գաղափարը:

Այսօր, ինչպէս ըսի, ամեն ուժ եւ հեղինակութիւն Դրամին ձեռքն անցած է. ուժ եւ հեղինակութիւն որ, անպատճառ յառաջիկայ դարուն մէջ պիտի հասնին իրենց գագաթնակէտը. միեւնոյն համեմատութեամբ բնականաբար զարգանայ նիւթական շահերու հոգը, եւ իր հետ նաեւ շահամոլութեան ոգին, հետզհետէ զգալի փոփոխութեան ենթարկելով մարդոց խորհելու եւ դատելու կերպերը:

Այս է այն տխուր հեռապատկերը զոր կը ներկայացնէ միզի ապագան 20 դարուն մէջ:

Սակայն աշխարհի ձախորդութիւնները եւ ցաւերը, ընդհանրապէս կուենան իրենց քիչ թէ շատ մխիթարական կողմերն ալ:

Պատմութիւնը մեզի կը սորվեց. նէ թէ ամեն իշխանութիւն եւ հեղինակութիւն որքան զօրանայ, այնքան աւելի զեղծումներու ծը:

նունդ կուտայ եւ որքան զեղծում. ներբազմանն ու սաստկանան, այնքան ալ կը մօտենայ տիրապետող տարրին կործանումը:

Այս կերպով կործանեցաւ վերջին դարու մէջ հռովմէական եկեղեցւոյ գերագոյն իշխանութիւնը եւ իրեն յաջորդեց եւրոպական բացարձակ միապետութեանց իշխանութիւնը, որ ալ պէտք չունեցաւ Պապին հրամաններուն կուրօրէն հնազանդելու առաջուան պէս: Բացարձակ միապետութիւնը նոյն պէս իր կարգին կործանեցաւ, իր զեղծումներուն եւ զոհերուն պատճառաւ որոնց ուղղակի հետեւանք եղաւ ֆրանսական մեծ ցեղափոխութիւնը:

Նոյնը պիտի պատահի Դրամի տիրապետութեան, որուն ներքեւ կապրի այժմ մարդկութիւնը եւ որուն զեղծումները արդէն շատոնց է որ սկսած են. ասոնց զաւակներն են Ընկերավարութիւնը եւ անիշխանականութիւնը:

Դրամագլուխի ուժը հետզհետէ աւելի սաստիկ եւ բացարձակ պիտի դառնայ աշխարհի արդի տրեսեսական պայմաններուն մէջ, իրեն հետ պիտի աճին իր զեղծումները եւ մարդոց շահամոլութիւնը: Միեւնոյն ժամանակ Դրամագլխի եւ իր զեղծումներուն դէմ մղուած պայքարը անպայման պիտի սաստկանայ ու տարածուի նոյն համեմատութեամբ ու չի պիտի կրնայ դադրել միջին ու առաջ բերէ տնտեսական բոլորովին նոր պայմաններ, նոր կարգ ու սարքեր ուր տառապող մարդկութիւնը կրնայ լայն շունչ մը առնել Դրամի ձեռքէն խլելով գերագոյն զօրութիւնը:

Վա՛յ այն սերունդին կամ սերունդներուն որ այդ տակաւին հեռաւոր տպագրայէն առաջ ստիկ պայքարի օրերուն մէջ պիտի ապրին, պիտի նահատակուին անոնք, պիտի փճանան դրամին եւ շահամոլութեան ուժին ներքեւ ճգմուելով:

Օ. Գոռգեմ

1800-1900

— Բ —
ՌՈՒՄԻԱ

Ռոմանօֆներու կայսրութիւնը վերջացող դարուն մէջ հինգ գահակալներ ունեցաւ, որոնք Մեծն Պետրոսի սկսած գործին շարունակողները եղան. եւ Ռուսիա հարեւր տարուան արդիւնաւոր շրջան մը բոլորեց. հետզհետէ կազմակերպուելով ու տարածուելով, 19րդ դարուն սկիզբին Նաբօլէոն Ա. զբեթէ ամբողջ Եւրոպան կերպարանափոխած եւ ազգութեանց ճակատագրերը ըստ կամս վճելով. իր ահաւոր զորութեամբ բը այդ ժողովուրդները ահաբեկ եւ ձեռնկալ վիճակի մը մէջ դրած էր:

Քաղաքակիրթ աշխարհը այս կացութեան մէջն էր երբ Մեծն Նաբօլէոն, օրուան ամենազօր բռնակալը մտադրեց Ռուսիա ալ արշաւել: Այս արշաւանքին հանդէպ Ալեքսանտր Ա. կայսրը մինակ կը մնար: Քաղաքացիք անցան սահմանազուլը եւ կայսերական բանակները Մոսկուայի Ռուսիոյ այդ պատմական եւ վաղի մայր քաղաքին առաջը եւ իւրեցան: Ամբողջ Եւրոպա թունդ սրտով եւ ակնդէտ կը հետեւէր այս արշաւանքին, որուն ելքէն կախում պիտի ունենար իր օրուան վիճակին վճռականութիւնը:

Ռուսաց սեփական ուժը չը բաւեց յաղթական կայսեր ընթացքը կասեցնելու, հարկադրուեցան տեղի տալ ու Մոսկուան ձգել:

Մոսկուան Գաղղիացւոց պատասպարան պիտի ըլլար. ցուրտէն եւ մարտէն յոգնած բանակը հոն վերստանալով իր ուժը պիտի յառաջանար դէպի Նեւիայի եզերքը Ս. Բեթեղսպուլը:

Բայց Ռուսք Մոսկուան ձգելէ առաջ այրեցին զայն:

Նաբօլէոն այսպէսով ձմեռուան սոսկալի եղանակին մէջ պատասպարուելու ամեն միջոցէն մէկէն ի մէկ զրկուած բացը կը մնար: Այս անակնկալը աշխարհակալ կայսեր ծրագիրը տակն ու վրայ ընելով, Նաբօլէոն մտադրեց վե-

րադառնալ, նոր ուժերով եւ յարմարագոյն եղանակին նորէն գալու համար: Քաղղիացւոց այս նահանջը շատ մեծ ձախողութեամբ կատարուեցաւ: Ռուսաց հալածանքը եւ ցուրտն ու անօթութիւնը ահագին կորուստներ պատճառեցին ֆրանսական բանակին: Պոնապարթի վերադարձէն յետոյ իր անկումն ալ չուշացաւ եւ այսպէսով ինչպէս Եւրոպա նոյնպէս Ռուսիա ալ իր կարգին ազատեցաւ ընդհանուր փորձանքէն:

Ռուսիոյ համար այլ եւս ժամանակն էր իր գործը շարունակելու: Ալեքսանտր Ա. ի յաջորդ Նիքոլայ Ա. կայսեր օրով Ռուսք վերջնականապէս տիրացան Երեւանի նահանգին, շնորհիւ համբաւաւոր Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսի եւ հայոց զոհողութիւններուն:

Տեղն է հոս յիշատակել թէ այս առթիւ Նիքոլայ կայսրը հանդիսաւոր ուխտագրով մը կաթողիկոսին խոստացած էր, հայերուն իրենց ծառայութեանց փոխարէն առանձնաշնորհեալ վիճակ մը տալ Ռուսական պետութեան թեմերու: Թեան տակ, սակայն այդ թուղթը աւելի դժբաղդութիւն մը եղաւ մեզ հայոց համար եւ խաբէութեան մը զոհը եղանք: Ռուսիա հայ ուժերով իր ճգնաժամը անցնելէ վերջ չը յարգեց իր ուխտը: Խոստմանագիրը անհետացաւ Լիմաւոնայ գանձարանէն եւ Պրովորոքը վեհաբանի մէջ ոտք դրաւ:

Նիքոլայ կայսեր օրով էր որ Ռուսիա, Անգլիա եւ Ֆրանսա ի նպաստ Հելլենացւոց զօրեղ միջամտութիւն մը ըրին Օսմանեան կայսրութեան քով եւ ցունաստանը ստացաւ իր ազատութիւնը:

Նոյնպէս Նիքոլայի ատեն Ռուսիա մեծապէս նպաստած եւ օգնած է Աւստրիոյ, հունգարական ապստամբութիւնը զսպելու համար. այդ թուականէն կըսկսի Մաճառներու հակակրօնութիւնը ընդդէմ Ռուսաց:

Բայց Նիքոլայ կայսեր վերջին օրերուն շատ նպաստաւոր չեղաւ Ռուսիոյ քաղաք. Թուրքիոյ նկատմամբ ունեցած ծրագիրը զէթ ժամանակի մը համար ջուրը կիյնար, խրիմի պատերազմով, ուրկէ թուր-

քը յաղթական դուրս ելաւ շնորհիւ եւրոպական պիտուածանց աշակցութեան և մանաւանդ Անգղիոյ ու Գաղիոյ միջամտութեան։

Բարիքի դաշնագրով վերջ տրուեցաւ խրիմի պատերազմին։ Ռուսիա թէեւ պարտուած, բայց յայտնապէս հասկցած էր այլ ևս թէ իր ծրագիրներուն ոչ միայն իր զրացները այլ և Արեւմտեան Եւրոպան ալ արգելք էր, և այս Ռուսիոյ արտաքին աշխարհափառութեանը համար նոր դարազուլի մը բացաւ։

Նիքոլա Ա. կայսեր յաջորդեց Ալեքսանտր Բ.

(Շարունակելի)

ՇՈՒՄԼԱՅԻ ԵՒ ՎԱՌՆԱՅԻ
ԿՐԹԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԵՐ

Շումլայէն է որ կը գտնուի Այդ քաղաքին համակրող չեմ, ոչ ալ Շումլացիներուն սիրահար։ Բայց միեւնոյն ատեն երբոր ճամբաս այդ կողմ իյնայ, միշտ համակրութեան արժանի սփոփիչ ձեռնարկ մը և մխիթարական կարգադրութիւն մը կը տեսնեմ։

Շումլայի մէջ բացի եկեղեցիէն վերանորոգելու անհրաժեշտ պէտքէն, աղքատին տեսակէտով զրկելէ ամեն ինչ ուրախաւիթ գտայ։ Ազգ. երկսեռ վարժարանը բաւական կարող ուսուցիչներու ձեռքին մէջ կանոնաւոր կրթութեան, եկեղեցւոյ պաշտօնէութիւնը, քահանայ և թաղական, գոնէ առ այժմ ամենայն կարգապահութեամբ կը գործեն։ Կոկիկ ընթերցարան մը, որ զրկելէ ազգային բոլոր թիրթիր ու հանգէսներ ունի, ցոյց կուտայ թէ յառաջդիմասէր երիտասարդաց խմբակը միշտ կը գործէ։ Բայց ասոնք նոր ձեռնարկներ չեն։ Այդ բաները Շումլայ սկիզբէն ունեցած է։ Համակրելի նոր ձեռնարկ և ուրախաւիթ նոր կարգադրութիւն ըստներս իսկապէս նոր են, Շումլայի հայ Տիկիներու Բարեգործական Ընկերութիւնը, որ շուրջ երեք տարիէ ի վեր զոյուլիսն ունէր, քանի մը ամիս առաջ իր անդամուհիներուն մէկ մասին հրաժարութեն վերջ առանց լուծուելու նոր ուժերով նորագոյն կազմակերպութիւն մը ստացած և այս անգամ ալ մանկապարտէզ մը հիմնած է։ Այս նոր հաստատութիւնը ըստ արժանոյն կը քաջաբերուի ժողովուրդին կողմէ։ Թիկիները գոհ են թէ հասարակութենէն, որ կը նպաստէ և թէ նորընտիր ուսուցչուհիները որ լաւ կաշխատի և թէ մինի մինի սաներէն, որք իրենց շուրջը խնդ ու ժպիտ կը սփռեն։

Պաշտօնական վարժարանաց մէջ զրկելէ չտեսնուած կամ հայոցս համար խիստ հազուադէպ նոր կարգադրութիւն մըն ալ իմացայ այս անգամ Շումլայէն։ Այս կարգադրութիւն ի՞նչ ըլլալ կը կար-

ծէք, ընթերցողք։ Այդ քաղաքի ողջ վարժարանաց հոգաբարձութիւնը լրջապէս իր վարժապետներուն իրեն մարդ ապրելու պէտքը մտածել սկսեցին, և այդ պատճառաւ ամսականներուն յաւելում մը ըրեր է։ Կրթական հաստատութեան մը համար այս տեսակ կարգադրութեան մը արժէքը և բարոյական օգուտը վարժարանի լիզուէ հասկցող, ուսուցչութիւն ընող անձեր միայն կրնան ըմբռնել, ոչ թէ վաշխառու և շուկայամիտ անհատներ։ Ուրք բաղդին բերումովը կամ իրենց մեքենայութիւններով կը յաջողին հոգաբարձու ընտրուիլ։

Վառնայի ազգայինք այս վերջին նախադասութիւնը իրենց հոգաբարձուներու դէմ սուր ակնարկութիւն մը թող չըմբռնեն։ Այս վերջինները իրենց խեղճութեամբը անցեալ տարւոյ ուսուցիչներէն խաբուած էին, այս տարի ալ իրենք նոր ուսուցիչները խաբեցին, սա կերպով։

Նախ տարափոխիկ հիւանդութեանց պատճառաւ քաղաքապետութիւնը մանկապարտէզները եւ ընտելւածները առժամապէս զոյցելու հրահանգ տուած ըլլալով, վառնայի հոգաբարձութիւնը առիթէն օգտուելու օգտից ու վարժարանները բոլորովին փակեց 14/2 ամիս և ուսուցիչները պաշտօնէ դադրեցուց, որպէսզի այդ դարձի ատեն ամսական չի վճարէ, վարժապետները ու վարժուհիները օգով ապրին ու աշակերտները փոքր ու մեծ փողոցները սլքտան, մինչդեռ մասնաւոր վարժարաններ ու ժիմնալը բաց էին միշտ։ Երկրորդ յունվար 17ին կորոշուի վարժարանը վերաբանալ, պայմանաւ որ՝ պաշտօնէութեան 14/2 ամիսը չվճարուելէ զատ արձակուրդի երկու ամսականներն ալ չվճարուին ու ատկէ զատ 150/0 զեղչ մը ընդունին։ Որով խեղճ ուսուցիչները իրենց արդէն անգոհացուցիչ ամսականէն 400/0 զեղչ մը կրած կը լինին։ Ի՞նչ սքանչելի կարգադրութիւն։ Այլ վառնային թող շատ բան սպասէ իր զաւակներէն, երբ ասոնք տարւոյն քանի մը ամիսը փողոցները սլքտալէ ետք կէս նոթի թողուած ուսուցիչներու սրտնեղ դասախօսութեանց պիտի ունենան։

Գ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Քաբիզ 24 յունվ. 1900

Լահէի դեսպանախորհուրդին ֆրանսական երկրորդ պատուիրակ Պ. Տէթմունէլ իւնիոն Գռէթիէնի մեծ սրահին մէջ երեկ գիշեր երկու հազարի մօտ ընտրեալ ունկնդիրներու ներկայութեան մէկ ժամէն աւելի խօսելով՝ դեսպանախորհուրդին ընդհանուր խաղաղութեան դատին ինպաստ ձեռք բերած արդեանց կարեւորութիւնը փորձալից շնչողով մը ի վեր հանելէ վերջ, չուզեց նաեւ լուռ անցնիլ հայկական դատի մասին զոր խնդրոյ նիւթ եղող ընդհանուր խաղաղութիւնը արդար իրաւամբ

վրդովելու հրեւոյթը արդէն ստացած է, այսպէս ուրեմն իթէ ոչ ի սէր մարդասիրութեան և արդարասիրութեան գէթ ի սէր ընդհանուր խաղաղութեան անվրդով պահպանման կարժէր միանգամայն վերջնականապէս լուծել արդարութեան այդ հարցը, քրիստոնավայել կորովով մը մարտիրոսացեալ այդ դժբաղդ ժողովուրդին արդարագոյն դատը։ Այո՛, ըսաւ այդ ժիր, ուշիմ, մտաւորապէս թէ բարոյապէս զարգացեալ և իրաւամբ յամենուստ համակրութեան արժանի այդ քաջազն հայ ազգի ստուարագոյն մասը, անուրք թուրքին բարբարոս իշխանութեան անտանելի լծին, սուրին և սփոնեւորուն ներքեւ լքեալ։ Սուլթանէն զատ չունէր վեհապետ մը որուն մարդասիրութեան կոչում ընէր զինքը այս ահաւի կացութեան և անտանելի լուծէն ազատելու համար։ Սակայն Սուլթանը ծանօթ իր տրամադրութիւններով և զգացումով, չըլսեց հայուն ձայնը, անկարելիք մնաց անոնց ցաւերուն հանգէպ, և չը բարեփոխեց այդ պատմական ազգին ճակատագիրը որ միեւնոյն ատեն իր երկրին շահն ալ կը պահանջէր։ Որով իրաւամբ յարմարագոյն առիթը թուեցաւ գէթ առեւտրային Հայոց համար Լահէի դեսպանախորհուրդը, իրենց վերբերը բանալու և իրենց հարկը հազարաւոր զոհերուն ձայները լսել ընել տալու համար։ Բայց շատ և շատ կը ցուրտ ըսել թէ այդ համակրելի ազգին երկսեռ ու տաղանդաւոր ներկայացուցիչներուն կողմէ ճարտար միջոցներով դեսպանախորհուրդին եղած դիմումները ապարդիւն մնացին։ Արդարեւ դեսպանախորհուրդին մէջ խորհրդակցութեանց առարկայ ըլլալիք հարցերը շատ որոշ էր. կանխաւ պատրաստուած ծրագրի մը համաձայն։ Ըստ որում դժբաղդաբար դեսպանախորհուրդը և հետեւաբար ֆրանսայի պատուիրակութիւնը բռնադատեալ, արգիլուած էին հայկական հարցը յուզել։

Այսպիսի կարեւոր և պաշտօնական անձնաւորութեան ու միանգամայն երեսփոխանական ժողովի անգամի մը այս խիստ նշանակութիւն ունեցող ատենախօսութեան մէջ, Հայերու վերաբերեալ ակնարկութիւնը նոյնութեամբ և կատարեալ հաւատարմութեամբ «իրաւունք» ընթերցողաց կը փութամ հազորդել յուսալով որ բարոյական մխիթարութիւն մը կըլլայ և առժամանակեայ մեղմացուցիչ մը հայ վերքերու ցաւին։

Նաեւ ոչ նուազ ուրախալի էր այն որոտընդոտ ծափահարութիւնները ատենախօսութեան միջոցին երբ Հայոցս նկատմամբ կը խօսուէր։

Հայ ազգին համար ցոյց տրուած հրապարակային այս ջերմ համակրանքի հաւաստիքէն չըզգացուիլ

խիստ անընական պիտի ըլլար հոս ներկայ գտնուող հայերու համար և խորհելով որ շատ աններելի պակասութիւն մըն է անտարբեր մնալը, փութացինք ներկայ եղող սակաւթիւ հայերս յաւարտ ատենախօսութեան առաջնորդութեամբ ակումբի ընդհանուր քարտուղար պարոնին, ներկայանալ ատենախօս Պ. Տէթմունէլի իւրաքանչիւրին զատ զատ ջերմ երախտագիտութիւնն իսկ յայտնելու համար։ Հակառակ այն կասկածին զոր ունէինք թէ Պ. Տէթմունէլ յոգնած ըլլալուն թերեւ չը հաճէր ընդունել մեզ, բայց խիստ քաղաքավարութեամբ ընդունեց, և յուսադրեց մեզ բանով թէ պէտք չէ վշտել և թէ արդար դատ մը միշտ իր արդարութեամբ պիտի գտնէ, ու ինքը որ մարդասիրաբար մեր դատի պաշտպանութիւնը ձեռք առած է, խոստացաւ ամեն ատեն երբ առիթը ներկայանայ իր շրջանակներու մէջ ազգեցութիւն բանեցնել ինպաստ մեր դատին։

ԱՌՈՂՋԱՊԱՆԱԿԱՆ

— 10 —

Բնաճխոյ թրոշուտի արկածները
Այս վերնագրոյն տակ մէկ քանի խօսք ընել աւելորդ չի՞նք համարիր, նկատելով որ հայ մամուլին մէջ թերեւս մինչեւ ցորդ քանիցս երեւան ելած նոյն իմաստ գրութիւնները չեն կրցած բոլորովին առաջը առնել այն ազիտալի արկածներուն, որոնք բնածխոյ թթուութեամբ կոչուած զարչիլ կազին ազգեցութեան տակ ստեպ կերելին և որոնցմէ զերծ մնալու համար առողջապահական մէկ քանի անհրաժեշտ պայմաններու գիտակցութիւնը մեզ պիտի բաւէ։
Ամենուս ծանօթ է որ՝ երբ ամուսն ու է ամանի մը մէջ զննելով վառենք, անկէ բնական թանձր մուխ մը կըսկսի ելլել։ Այս մուխը զլխաւորաբար անխալիս թթու և բնածխոյ թթուութեամբ երկու փոխապարկազ կազերէ կը բաղկանայ։ Բազմաթիւ փորձեր կը հաստատեն որ այս երկու կազերէն առաջնոյն ազգեցութիւնը զրկելէ առաջին կը մնայ երկրորդին քով, որն որ անհունապէս աւելի զօրաւոր հեղձուցիչ և թունաւորիչ է։ Արդարեւ բնածխոյ թթուութեամբ կոչուած կազը այնքան ուժգին կը ներգործէ մեր վրայ որ օգին մէջ իր հարկերին կէս կամ մէկ գոյնութիւն կը բաւէ մարդս թունաւորելու կամ շնչահեղձ ընելու։ Մինչդեռ իր հազարին մէկ, և մինչեւ իսկ խառնուածքներէ ոմանց և կամ տղայոց համար իր տալը հազարին մէկ խառնուրդն ալ կարող է բաւական ծանր արկածներ յառաջ բերել։

Այս ապականիչ կազը արտադ-

որոշ աղբիւրներու թիւը դժբաղ-
տաբար մէկէ աւելի է. կրակա-
րանները, տեսակ տեսակ շերտոց-
ները և ծխնելոյղները իրենց պատ-
րաստութեան եղանակին համա-
ձայն, իրարմէ աւելի կամ նուազ
քանակութեամբ բնածուխի թը-
թուտ արտադրելու տրամադրու-
թիւն ցոյց կուտան:

Անհրաժեշտ է գիտնալ որ՝ ու
է այրող մարմին այնքան աւելի
առատ կարտադրէ այս կազէն,
որքան աւելի ինքը անբաւական,
անմաքուր և նուազ օդի տակ կը
վառի, Այս պատճառաւ, երբ մեր
կրակարանները գոց յարկի ներ-
քեւ, սենեակներու մէջ կամ պար-
զապէս խաղաղ օդին տակ պատ-
րաստուին, իրենցմէ գոյացող
թանձր մուխին, չափէն աւելի
գլխու ցաւ պատճառելը և կամ
կրակին հրահրումէն քիչ մը վերջ
թնածխոյ թթուութի առատօրէն
ներկայութիւնը ազդարարող կա-
պոյտ բոցի գոյութիւնը կը նշ-
մարուի: Արեւմտեան մեր բոլոր
բնածնէն կը հետեւի որ, շեռուց-
ման գործարաններու մէջ օդին ա-
զատ, օրինաւոր և առատ մուտքին
արգելք հանդիսացող ամեն պատ-
ճառ վերոյիշեալ կազին արտադ-
րութեան մեծապէս կը նպաստէ:
Ահա թէ ինչու մեր շերտոց-
ները առողջապահիկ համարուելու
համար, բաւական լայն և պատ-
շաճ ուղղութեան վրայ գտնուող
և կամ արտաքին օդին հետ լաւ
հաղորդակցութեան մէջ եղող խո-
ղովակներով օժտուած ըլլալէ զատ,
մէկ մէկ փոքրիկ երկրորդական
դռնակ և մէկ մէկ ալ կանոնաւոր
բանալիներ ունենալու են:

Իրաւ է որ, մարդ շերտութիւ-
նը իր մէջ առանձն ալ պահելու նը-
պատակաւ երբ շերտոցի մը բանա-
լին քնցէ ու նստի, նիւթապէս օգ-
տուած կը համարուի. սակայն
այս օգուտը կամ չափը ի վնաս իր
առողջութեան ըլլալն ալ այնպի-
սին պէտք չէ մոռնալ:

Տեղն է անցողակի կերպով յի-
շիլ որ առողջարանութեան տեսա-
կէտով ամենէն լաւագոյն շերտոց-
ներն են յախճապակիէ (չինի) պատ-
րաստուած և ներսի կողմէն թըր-
ծիւնի բաւական թանձր խաւով մը
ծեփուածները, որոնք շատ մը ա-
ռաւելութիւններէ զատ իրենց մէջ
գոյացած կազերուն մանաւանդ բը-
նածուխի թթուութիւն իրենց ան-
տեսանելի ծակոտիկներէն դուրս
անցնելուն ամենէն նուազ նպաս-
տողներն են:

Պահ մը մեր խօսքը մասնաւո-
րելով շերտութեան միջոցներէն մին
եղող կրակարանի գործածութեան
մասին փոքր գիտողութիւն մը ը-
նենք:

Կրակարանները այսօր գրեթէ
անգործածելի մնացած են իրր շեր-
տութեան անբաւական, յոռի եւ
ֆինասական միջոցներ, իրաւ է,
ասոնք իրր անբաւական և առտնին
տնտեսագիտութեան տեսակէտով
անընդունելի միջոցներ կրնանք ըմ-
բռնել, բայց իրր ֆինասական մի-
ջոցներ (') բնու երբէք: Քանի որ
բաց օդին տակ պատրաստուած,
լաւ մը հրահրած, արծարծած սե-
ւածութիւն վիճակէն ելնելով բոլորու-
մին կարմիր կրակի փոխուած եւ
ո եւ է կապտադոյն բոց չի տեսնուած
կրակարանի մը գործածութեան մէջ
բնաւ անպատեհութիւն չի նշմար-
ուիր:

(Շարունակելի)

(*) Կան տեղեր, ինչպէս է մեր ներ-
կայ բնակավայրը եղող վառան, ուր
կրակարանի գործածութիւնը բոլորու-
մին թողուած եւ շերտոցները մուտ
գտած ըլլալուն պատճառաւ, մարդիկ
ածուխը կը դատապարտեն, անոր դա-
նազան ֆինասական յատկութիւններ եւ
հանգամանքներ վերադրելով: Մենք,
ինչպէս ըսինք, չենք կարծիք որ այդ-
պիսիները իրենց այդ առարկութեան
մէջ իրաւունք ունենան. երբ մէկ կող-
մէն գիտենք ալ որ տեղային ածուխ-
ները բաղադրութեամբ շատ չեն տար-
բերի ուրիշներէն:

Տեղային ածուխներու, գլխի -զար-
նելու, ինչպէս կըսեն, պատճառը,
մենք շատ շատ կրականներու կիսկա-
տար պատրաստութեան, ինչպէս նաեւ

ԼՐԱՔԱՂ

Ս. Հայրապետ Ախալքաղաքի
երկրաչարժէն արկածելոց 1,000
բուլի նուիրեր է:

—Վանայ այցելու հովիւ Տ. Ներ-
սէս եպիսկոպոս Ասլանեանի ինը-
պատ Վանայ կարօտելոց ըրած
գիմովին ի պատասխան, Ս. Հա-
րապետը իմացուցեր է որ չպիտի
կրնայ ու եւ է կերպով օգնել Վա-
նի. որովհետեւ Երեւանայ շրջա-
կանները և էջմիածնայ մէջ բաւա-
կան թուով կարօտեալներ կը զըտ-
նուին, որոնք կը սնանին Մայր
Աթոռին կողմանէ: Եւ թէ այժմ
Ռուսիոյ մէջ տիրող սղութիւնն
ու երկրաչարժներն ալ արգելք են
նպաստ զրկելու:

—Գաւառներու մէջ տիրող յի-
տին աստիճան կարօտութիւնները
նկարագրող և անմիջական նպաստ
խնդրող բազմաթիւ նամակներ
հասած են ի Պատրիարքարան:

—Երզնկա քաղաքին և շրջակայ
թեմերուն բազմաթիւ աղքատե-
րէն զատ, Գիւլիսէն, Քիլիկիէն եւ
Բաբերդէն երկսեռ և ամեն հասա-
կէ մեծ թուով կարօտեալներ Եր-
զնկա դիմած են անթոքութեան եւ
մերկութեան չմեղելու համար:
Երզնկայի Առաջն. ու վարչութիւ-
նը անմիջական նպաստ խնդրած
են Պատրիարքարանէ:

—Մոսկուտի Ժամհարան եղ-
բորք այս անգամ բաւական կա-
րեւոր գումար մը դրած են Նը-
պատեց Գանձնաժողովոյ տրամա-
դրութեան տակ. որպէս զի իրենց
այս նպատակով Մարաշ հաստա-

տեղային տուններու շինութեան՝ առող-
ջապահական օրէնքներու բոլորովին
հակասակ ըլլալով, նեղ, սահմանափակ
ցած առատապէսալ և առհասարակ
միակողմանի պատուհաններով կարգա-
ւորուած ըլլալը կը դառնան:

Դիտելը պարտէզը տարինք եւ խո-
տիւրին մէջ ծածկուեցանք, որովհետեւ
թիւրքերը ետ կը դառնային: Այլ ո՞վ
պիտի թողէ մօրաբոլոյս դիակը. սպա-
սեցինք հօրս, սպասեցինք, իսկ նա
չէր գար: Հետեւեալ երեկոյ մայրս ը-
նաւ, Լիւս գնա զաւակս, Նէսեւոյնց
տունը եւ անոր բրիչը ուղէ մօրաբո-
ղոյ գերեզման փոխելու համար:

Կամացուկ մը գացի, զի կըզգուշա-
նայի որ Տէլիպաշիները չտեսնեն ինծի
եւ երկու թի ու մէկ բրիչ բերի: Քա-
նի մը պառաւ կիներ եկան մեզ օգնե-
լու: Մինչեւ կէս զիշի գերեզմանը
փոխեցինք լմնցուցինք. արշալոյսին մէ-
ջը Նեսեւոյնց գիտիլը եւ թաղեցինք
առանց ախրտէրի, առանց մոխի, ա-
ռանց ալօթքի եւ առանց խնկի, մի-
այն մայրս խաչակիքի քրոջը երեսին
եւ ըսաւ. «Աստուած հոգին լուսաւո-
րէ»: Երբ լմնցուցինք այս տխուր դու-
ծը, եկաւ ծերունի Մլատէն եւ պատ-
մեց Տէլիպաշիներին հօրս բրածները եւ
այս բարի ու խաղաղ մարդուն բո-
լոր քաջածնիքը: Նէսայի եւ Տրապիզի
ի՞նչ ըլլալը մէկը չէր գիտեր. միայն
ծերունի Մլատէն ըսաւ մեզի որ աղան
իր բոլոր Տէլիպաշիները զրկեր է զա-
նոնք վնասուելու համար:

Գացինք աղաջելու որ հօրս մարմինը

տուած որբանոցին մէջ արհեստա-
կան ճիւղ մ'ալ աւելցուի:

—Իզմիրի մէջ ինպաստ Աղգա-
լին երկսեռ որբանոցներու պարա-
հանդէս մը տրուած է և արդիւն-
քը եղած է 300 ոսկի:

—Անցեալ նոյ. ամսոյ մէջ Աղգ-
հիւանդանոցի եղած նպաստն է
11,877 դրշ:

—Երեւանի Պատրիարքին
փոխանորդ Տ. Երեմիա Արք-եպիս-
կոպոս Սահակեան վախճաններ է:
Հանգուցեալը Բնիկ Բաբերդցի և
կէս դարէ ի վեր անդամ էր Երեւ-
անի միաբնակութեան:

—Տիկին Մարի Սվաճեան (մայր
Պ. Վահրամ Սվաճեանի) Բաբերդի
մէջ ի մօտոյ պիտի սկսի հրատա-
րակիլ կանանց յատուկ թերթ մը
«Զարդ» հանդէս Բաբերդեան նո-
րածեւութեանց» անունով:

—Պատրիարքը օրհնութեան գիր
մը զրկիլ է Պոլսոյ Եջնի Գաբու-
թապետի Անտոն Սագաեան անուն
տղեկի մը, որ Կաղանդի օրը իր
ծնողաց կողմէ իրեն տրուած չորս
քառորդ մէծիտի գումարը փու-
թացեր է անձամբ տանիլ Պատ-
րիարքին ի նպաստ հայ որբերուն:

—Պոլսոյ Աղգալին դպրոցներու
նոր վիճակացոյցին նայելով, 1900
յունվար 1ին անոնց ամենուն մէջ
կային 3146 աշակերտք և 2205
աշակերտուհիք գումար 5351.
այս հաշւոյն մէջ կը պարունակեն
40 թաղային վարժարաններ և
ասոնց ամենուն համար եղած ամ-
սական ծախքն է 83,556 դրշ:

ՊԱՏՈՒՆԱՆԻ ՄԱՌԻՆԱՎՈՐ

ՆԵՆԵԱՎՈՐՈՒՆ

ՀԱՆՔ. ՏԻՐԱՆ ՄԱՆԱՎԱՆԻ

Նոր լոյս տեսած այս թատեր-
գութիւնը ստացած ենք:

Քին 1 փրանք. կեդրոնատեղին
է Օնիկ Բարսեղեան Արեւելեան
տպարան:

Ղառնա

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (13)

ՆԵՏԱ

(ՄԱՍԻՍ ՊԱՏՄԱՍԻՐ)

Ե

Երկար առանձնացիք մամիս հետ
և անձայն կարտասուէինք. երկար ա-
տեն մամս վեր վար կը նայէր եւ բան
մը կը մըմար. —կաթթէ՛ր. երկար ա-
տեն կը հառաչէր ու բերնէն անէծք
կարճակէր. թշուա՛ռ կեանք:

—Պատմէ, մամիկ աղաչեցի ես եւ
աչքերին մէջը նայեցայ:

Մամս արցունքը արեւից, անգամ մը
հառաչեց ու սկսաւ խօսիլ. «Արգիօք
կենդանի պիտի մնամ որ աչքերովս
տեսնեմ թիւրք արեան հոսիլը. բարի
է Աստուած, մեզի համար ուր: Մամս
տխուրութեամբ մպտկեցաւ: «Տրապիզի
նէսան քաջաշէնով, չարո՛ւնակեց, ան-
տառը կը փախչի եւ հովիւներին մօտ
կը պահուէր. . . բայց կեցիր առաջ
ուրիշ բան մը պատմեմ, վերջը Նէսան:
Մինչեւ հետեւեալ օրը պահարանը քը-
նացայ, առտուն կանուխ արթնցայ,
տեսնելու համար ի՞նչ կանցնի կը դառ-
նայ տանը մէջ: Թիւրքերը Նէսայի

մայրը բազմ նետած էին, իսկ մայրս
գաւթը փակած էին: Տէլիպաշիները
երբ իրենց ձիերին ջուր տալու դացին,
ես պահարանէն դուրս ելայ եւ գաւթ-
թին գոռը բացի ու մայրս դուրս ե-
լաւ: Հէ՛գ մայրիկ. երբ մայրս գաւթ-
թէն դուրս ելաւ սկսաւ հարցաքննիլ
ինծի:

—Ո՛ր, է հայրդ Լիւս:

—Ձեմ գիտեր, ըսի:

—Նէսա եւ մօրաբոլոյս ո՞ր եմ:

—Մօրաբոլոյս թիւրքերը բազմ նետե-
ցին, իսկ Նէսան աղային քով տարին:
Մայրիկ միթէ գուն չը տեսար տանե-
լու տանն:

—Օ՛հ, չեմ յիշեր, որդի, բան մը չեմ
գիտեր, ըսաւ մայրս եւ սկսաւ լալ:
Դուրս ելանք, մօրաբոլոյս ցիւխի մէջ
պտուկած էր եւ աչքերը երկինք դար-
ձուցած. չունեիր ձեռքերը կը լիզէին,
մարմինը կտոր կտոր ըրած էին ու ա-
րիւնը կը ծծէին: Նոյցեալ մայրս, նա-
յեցաւ ու ըսաւ տխուր թեմով, «Խեղճ
կին, ի՞նչ օրերի հասար. ամբողջ կեանք
քիզ մէջ տանջուեցար, իսկ հիմա որ
պէտք է դուն գերեզմանիդ մէջ հան-
գասանայիր, չունեիր կուտն քեզ:
«Շուններ» կը խմէին արիւնդ երբ կեն-
դանի էիր, չունեիր կուտն գարձալ
անշնչացեալ մարմինդ ալ:

Ինչպե՞ս յունվար նիհայեթին է գատար պու սենեկին ապօնէրէր էօտէյէնէրէ պիրէր ընդարձակ Ս. րոսցոյց վերիւնէն տիր :

ՄԻԻԹԵՆԵՎՎԻՅԷ

Թէհրան վէ Սէշէտտէն վերի- րիւնէ պիր թէլէկրաֆա նազարէն , 30000 րուս ասքերի թիֆլիստէն հարէքէթլէ Սաքապուտը կէշ- միշ վէ Աֆղանիսթանա կիթմէք իշին ֆիւշտ եօլը էլէ ալմշտըր :

—Թրանսպալ մուհարէպէսին տէն տօլարը Պէլճիգա վէհոլան տա էլմաս ֆապրիգալարը իշի թաթիլ իթմիշէր տիր :

—Վաքըրիսթանտա (Հինտիսթան) գարըզըզ պսշամըշ տըր . ասիւրի էլէ ինկիլիզէր պէյինտէ վուգու պուլան պիր միւսատէմէտէ ինկիլիզէր ֆէնա հալտէ էզիմիշ- լէր տիր . ասիւրիին զայէթ մահիր նիշանճը օլտուզարը սէօյլէնմէք- տէ տիր . եանի 600 մէթրօ ուզագ լըզտան վուրապիւմէքտէ իմիշէր :

Ինկիլիզէրտէ ֆէվզէլտէ րա- հաթսըզըզ հիւքմ իթմէքտէ տիր : Ասիւրիին էլինտէ պուլունան սիւտհ լար Աֆղանիստան վէ Պէլուճիստան թարիգի էլէ Հինտիստանա կիր- մէքտէ իմիշ , վէ տահա թէմաճիւպ օլընան մատտէ շու տըր քի պու սիւտհլար ումուճէն ինկիլիզ ֆապ- րիգալարնտան ալընմըշ տըր :

—Ինկիլիզէրա Լօրտար մէճիսի էլէ մէճիս մէպուսանը տիրէքի կիւն քիւշտ օլունմուշ տըր :

—Իշպու սէնէնին իպթիտասըն տա Աւստրիանըն Սէօտլինք շէհրի թարաֆընտա սիյահ գար եաղտը- ղընը կէօրիւմիշ տիր . պու գար մուսայէնէ օլունտըգտա գարտաքի սիյահլըղըն սէպէպի ումուճա մա- լիւմ օլան բիրէլէր իմիշ քի զայէթ քէսսէրէթլէ վէ սաղ օլարագ եա- զան գարտա պուլունմագտա իմիշ :

—Ալման կազէթալարընը գան նընա նազարէն Ալման տօնանմա- սընըն զամըր իշին թախսիս օլը- նաճագ մէսարիֆ իքի միլիար մառք օլաճաք իմիշ :

—Թրանսպալ մուհարէպէսի հագընտա պաղը Էփրօրա Տիւ- լօմաթլարը աթիտէքի էֆքեարը պէյան իթմիշէր տիր . եանի՝ շա- յէթ ինկիլիզէրա թրանսպալ մու- հարէպէսինտէ պիւսպիւթիւն մաղ- լուպ օլուր իսէտէ , Էփրօրա տա պէօյիւք պիր մուհարէպէսին զու- հուրը մէլհուզ կէօրիւնիօր :

—Վիէննա սապըգ Օսմանլը սէ- ֆիրի թէվֆիգ բաշսինըն մախտու- մը Նիւզհէթ պէյ , հէր սէնէ գըշ մէվսիմիտէ Մըսըրա կիթմէք միւ- թատը իքէն , պու սէնէ Սուլթան թարաֆընտան կիթմէսինէ միւսա- տէ օլունմամըշ տըր . ֆազաթ Նիւզհէթ պէյ իսլէնտէրիէյէ գաշ մաղա մուսֆըգ օլմուշ տըր :

—Շանկ.Հայտան վերիւնէ պիր թէլէկրաֆա նազարէն Ռէնիս Բիւ- ճէնկ էլան տօգուզ եաշընտա օլ-

տուղու հալտէ յունվար 31 տէ , (եանի պու կիւն) Չին իմբէլաթօր լըգ թախթընա ճիւլիւս իտէճէք իմիշ :

—Ճէպէլ Ուրապուտա էսիր տիւ- շէն մէշհօր Օսման Տիկմա Սուա- քիմէ կէօթիւրիմիշ տիր . անտէն հիւքիւմէթ թարաֆընտան թախ- սիս օլունմագ վաբօր էլէ Սուէզէ նազլ օլընմագ իշին :

—Ալմանիա , Աւսթրիա վէ ի- թալիա պէյինտէ մէվճուտ իթ- թիֆագ սէլասէնին միւստէթի խիթամ պուլունշ տըր :

—Իմբէրաթօր վիլհէլմին աղղու վէ զայրէթի էլէ Ալմանիանըն տէ- նիզ գուզէթիին ալընմագ ի- շին սէնէլէրտէն պէրու թէրթիպ օլընան ճէտվէլ րախստակըն թէտըզգ ու թատիգինտէն կէշ- տիքտէն սօնրա , Ալմանիա իմբէ- րաթօրըզընը թէշքիլ իտէն ու- ֆագ հիւքիւմէթլէրին մուրախաս- լարընտան միւրէքքէպ գօնսէյլ ֆէ- տէրալտան (Պաշնակցական խոր- հուրդ) գապուլ օլընմըշ տըր :

Մէշքիւր ճէտվէլին աճքեմալընա պինտէն , Ալմանիա շիմտիքի տօ- նանմաք կիպի իքիւնի պիր տօ- նանմա տահա եաբտըրաճագ տըր : Իշպու եէնի տօնանմա իքի գընմ- տան թէշքիլ օլընաճագ վէ էն եէ- նի վէ գուզվէթլի վարօրլորտան միւրէքէպ օլաճագ ըմըշ :

—Միւթմէթա Բրէնսէն Մա- րիա Լուիզա հագընթէթլէրին վէ- ֆաթընըն սէնէի տէվրիյէսի օլ- մագ մինասիպէթի էլէ , պու կիւն շէհրիմիզ եաս էլաթի վէ սիյահ պանտէրալար էլէ տօնատըլմըշ օլ- տըղը կիպի , պէօյիւք պուլկար քիլիսէսինտէ ալինը մախսուսի րուհանի իճրա օլընմագտա վէ էճնէպի գօնսօյուպար վէ սայիր զէվթը միւթմէպէրան պու սա- աթ հագըր պուլընմագտա տըր :

—Մէշհուր տամատ Մահմուտ բաշանըն Սուլթանա խիթապէն Բարիստէն եաղաղը մէքթուպ , պու կիւն երիմիզ միւսախտ օլմա- սըղընտան , էօնիւմիզտէքի ճու- մաս էրթէսի կիւնքի նօմէրօմըղ- տա թէրթիւմէթէն տէրճ օլընա- ճագ տըր :

—Եէնի իճատ օլընան թէլիւզ թէլէկրաֆ ինկիլիզ հարպ սէֆի- նէլէրինտէ իսթիմալ օլունմաղա պաշամըշ տըր : Պու ալէաթ պիր տաղիգտա 1500 տէն 2000 լու- ղէթէ քատար ալըպ վէրէպիլմէք- տէ տըր :

—Հինտիանըն զըրաթ նազըրը միւսթէշարը պիր նութգտա տէ- միշ տիր քի Հինտիատա հիւքիւմ- ֆէրմա օլան գըթլըգ մարտ նիհա- յէթինէ գատար հիւքիւմէթէ 100 միլիոն ֆրանգ պիր մէսարիֆ ա- շաճագ տըր : Ինկիլիզ մէմալիքին տէ 22 միլիոն վէ եէրլիլէրտէն 27 միլիոն քիշի գըթլըգ չէքմէքտէ տիրէր :

Իշպու պի էմալ ֆէլաքէթտէն վիգալէ օլընմագ իշին պէօյիւք իանէ վէ մուսվէնէթ լաղըմ տըր :

Հինտիստան վալիսի Լօրտ.Բըր- ղըն գըթլըքտան տօլարը հասըլ օլան գալիսթ ֆէվզէլտէ օլտու- ղընը պէյան իտէրէք իւպվէթէն տէմիշ տիր քի պու կիւն իւշ պու- շուք միլիոն քիշի իտէնէյէ միւհ- թաճ պուլունույօր : 1897 սէնէ- սինտէ վուգու պուլան քաշթտա ինկիլիզէրա իւզ պինլէրճէ լիւրալար թօփլամըշ տըր . ֆազաթ հալը հագըրտա ինկիլիզէրանըն նազարը տըգգաթը ումուճէն ճէնուպի Աֆ- րիգայա հասըր օլունմուշ օլմաղ- լար : Հինտիսթան պու պէօյիւք ֆէլաքէթին չարէսի քէնտի քէն- տինէ պուլաճագ տըր :

ՄՈՒՀԱՐԷՊԷ

Մուհարէպէսին հալի ինկի- լիզէրէ մէնֆաթլը սուրէթտէ կիթմէքտէ օլտուղունու հաղմըշ իտիք . հէրնէ գատար պիր բաշ միւսատէմէրտէ Պօնրէր կէրի չէքիլմէկէ մէճպուր օլուպ , վէ ինկիլիզէրտէ պիր գաշ մէվզը գապթ իթմէկէ մուսֆիֆագ օլ- մուշար իսէտէ , էլան պէօյիւք վէ էճնէթմիշլի պիր թէշէպպիւս վուգու պուլմամըշ տըր :

—Լօնտրատան 25 յունվար թա- րիսի էլէ վէրիւն պիր թէլէկ- րաֆտա , Պօնրէր Սթիօնգօր տա- ղը թէքըրա ինկիլիզէրտէն կէրի ալմագ իշին շիտտէթլէ հիւճիւմ իթմիշէր իսէտէ , զայէթ զիտտէ թէլէֆիւթ վէրէրէք կէրի չէքիլ- միշէր տիր : Իշպուհիւճիւմտէ ին- կիլիզ ժէնէրալը Ուզկէյթ աղըր սուրէթտէ եարալանմըշ տըր :

Սօն պիր հալմատիս մէրգուճ ժէնէրալըն էօլտիւկինի վէ Սթիօն- գօրըն էլան Պօնրէր եէտինտէ պուլունտըղըն անլատիօր :

—Լօնտրա կազէթալարըն ալ- տըղը մալիւմաթա կէօրէ , ճէնու- պի Աֆրիգատա շէտիտ պիր միւ- սաաթմէտէ ինկիլիզէրտէն 800 քիշի էօլիւ 1500 եարէլի տիւշ- միւշ :

—Շալֆիլտտէն (Ինկիլիզէրա) ա- ղընան պիր թէլէկրաֆա նազարէն մահալի պէօյիւք չէլիք ֆապրիգա սընտա թրանսպալ ինկիլիզ օր- տուսու իշին , պինլէրճէ զըրհար վէ գալգանլար եափըլմագտա ի- միշ :

—Նիւ Եորքտան վէրիւն պիր թէլէկրաֆա նազարէն , թրանսպա- ալ 1899 սէնէսի Ամբիգատան 700,000 չուվալ ուն սաթըն ալմըշ տըր : Թրանսպալ հիւքիւմէթի էլան քէսէրէթլէ սիփարիշ իթ- մէքտէ իմիշ :

ՍՕՆ ԹԵԼԵԿՐԱԳՐԱՐ

Սրանպօլ 15 յունվար
Էլիւրէրին կէշէն կիւնքի մէճիսի Պապը Ալիէյէն եէնի պիր նօթա վէրմէք գարարընտա պուլունմուշ տըր : Իշպու նօթա իլէ կէօրիւք իտարէսի թարա- ֆընտան էճնէպի մալարըն «քիմնալի անալիզ» եալըմադընտան տօլարը թիւարըղա մաղարաթլը օլտըղընը պիլտիլէրէք մէվքիւր իսիլին լաղը- նը թալէպ իտէճէք տիր :

Քէզա մէճիսի մէվքիւր սիւտհլարը թօփլամագ (եալտա իտիւլընը մէնն

իթմէք) խուսուսընտա Պապը Ալիէյին մէլի հոգու գը տիւվէլէ վէ անանալէ- լէրէ գարըն աստ իտէրէք ընտա իթ- մէք գարարը վէրմիշ տիր :

Իթալիա թապանսընտան Մաւմագէլ Սիւլիա Կամէլինին էսքի Շէհրաֆ պիր թիւրք գապիթի թարաֆընտան ճէպրէն գալտըրընը վէ քէնտի հա- րէմինտէ գապթ իտիւլիշ օլտըղընտան , Իթալիա էլիւսինին շիքեայէթի իւզէ- րինէ՝ մէրգուճէ գըզ Սթանպօլա կէ- թէրիլիշ իսէտէ . պէշ կիւնտէն պէ- րու Սալիլէ նէպարէթիւնտէ թէվզըֆօ- լընմագտա տըր : Էլիւ մէգպուրէնին սէ- ֆարէթհանէյէ թէսիլիին թալէպիթ- մէքտէ : Էլիւինին պու թալէպինէ քի- ֆայէթ վէրիլմէտիկինտէ պու վուգու- աթըն աղըր նէթիւճէլէր հասըլ իտէճէ- կի գանն օլընմագտա տըր :

Լօրէնցօ Մարիլիս 16 յունվար
Պօնրէրին օրտուկեանտան կէլին 13 յունվար թարիլի պիր թէլէկրաֆ պիլտիլիօր քի յունվար 12տէ Լէտար- միթ էօնիւնտէ Ինկիլիզէր 1500 քիլիշ էօլիւ պրազտըրա մուհարէպէ մէյտա- նընտա : Ժէնէրալ Պիւլէր թիֆօ իսա- թալըղընա թուրքուլուշ իսէտէ սըն- էթ պուլունշ տըր :

Բարիլ, 16 յունվար
Պու կիւն մէճիսի այան ինթիսա- պաթը իճրա օլընտը . սէշիլէնէրտէ Մ- Յրէյսինէ , Լէֆէր Բարցէ վէ Շարը Տիւքիւ : Շիտիլիւք քէրիւպիլիգալարըն սալըն էքսիլմէմիշ տիր : Ժէնէրալ Մէր- սիէ նանթտան ինթիսապ օլունմուշ տըր :

Լօնտրն 16 յունվար
Ժէնէրալ Պիւլէր Սթիօնգօրտէն 15 թարիլի ալտըլը թէլէկրաֆա պի- նաէն , Սթիօնգօրտան ժէնէլալ Ուօր- րըն ապէրէրի չրգարտըգտան սօնրա իքիւնի պիր հիւճիւմ իթմէք ֆայիտէ- սիզ կէօրիւմ , զիւրա Պօնրէրին սաղ գօլը չօգ գուզվէթլի օլտըղը իշին ան լէրի կէրի թէքտիլմէք միւմքին տէ- կիւրի . ապէրէրիլմի թիւճէլա ըրու- ղըն ճէնուպի թարաֆընը չէքմէկէ գա- րար վէրտիմ :

ՄԵԾ ՊԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ



ՍՕՕԻՍ ԲԱԶԱՐԻ			
ՊՈՒԼԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ ԵՐԱՇԽԱՌԻՍԱԼ Ա. ՊԱՐԿԵԻՆ Է 300,000 ՖՐ. ՈՍԻՒ 50,000 տոմսեր հրապարակ հանուած են , որոնց 25,000ը պիտի շահին հե- տեւեալ կերպով . 1900 տարւոյ՝			
Յուլիւս 4ին	1500	Թիւրք 101750	
Փետրվար 3ին	1500	» 143000	
Մարտ 6.7ին	2000	» 249400	
Ապրիլ 4.5ին	2000	» 318750	
» 25.26ին	2000	» 375300	
Մայիս 17 յուն. 7	1600	» 3352800	
		4539000	

ՊԵՆՏԵՆ ԵՆ ՈՍԻՒ ԵՐԱՇԽԱՌԻՍԱԼ			
ՊԵՆՏԵՆ ԵՆ ՈՍԻՒ ԵՐԱՇԽԱՌԻՍԱԼ Ա. ՊԱՐԿԵԻՆ Է 300,000 ՖՐ. ՈՍԻՒ 50,000 տոմսեր հրապարակ հանուած են , որոնց 25,000ը պիտի շահին հե- տեւեալ կերպով . 1900 տարւոյ՝			
Յուլիւս 4ին	1500	Թիւրք 101750	
Փետրվար 3ին	1500	» 143000	
Մարտ 6.7ին	2000	» 249400	
Ապրիլ 4.5ին	2000	» 318750	
» 25.26ին	2000	» 375300	
Մայիս 17 յուն. 7	1600	» 3352800	
		4539000	

Отговорникъ Н. Драгулевъ
Печ „Взаимность“ —Варна